ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ

(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

---

# ՈՐՈՇՈՒՄ

## Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/8112/02/24 ք. Երևան

28 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Սավա» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Սավա» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ-ի՝ www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 20.12.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՍԱՎԱ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ»

ծածկագրով պայմանագիրը միակողմանի և մասնակի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշումն անվավեր ճանաչելու, www.gnumner.am կայքի «Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումներ» բաժնում 04.09.2024թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշումը, ներառյալ «ՍԱՎԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ տեղեկատվությամբ անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո` եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն` հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում` պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն` ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո` հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն` նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ-ից պետք է պահանջել 20.12.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՍԱՎԱ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ» ծածկագրով պայմանագիրը կողմից միակողմնի և մասնակի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշման և 04.09.2024թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.««Սավա» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ-ի՝ www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 20.12.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՍԱՎԱ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ» ծածկագրով պայմանագիրը միակողմանի և մասնակի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշումն անվավեր ճանաչելու, www.gnumner.am կայքի «Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուների ղեկավարների պատճառաբանված որոշումներ» բաժնում 04.09.2024թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշումը, ներառյալ «ՍԱՎԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ տեղեկատվությամբ անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ-ից պահանջել դատարան ներկայացնել 20.12.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ՍԱՎԱ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ» ծածկագրով պայմանագիրը կողմից միակողմնի և մասնակի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշման և 04.09.2024թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Բալասանյանի որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան**

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.28 18:48:02 AMT

*Տվյալ փայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*